Լ. Միրիջանյանի անվան հ.155 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների ճանաչողական որակների բարելավումը խաղերի միջոցով

Ուսուցիչ՝ Անի Արշակյան

Ղեկավար՝ Մանուշակ Պետրոսյան

Երևան 2022

Հանգուցային բառեր

ճանաչողական հետաքրքրություն, համագործակցային հմտություններ, խաղային իրավիճակներ, ինքնահաստատում, արժեհամակարգի ձևավորում, երևակայական կարողություններ, ստեղծագործական ունակություններ, անհատականություն:

Ներածություն

Մեծահասակների, ինչպես նաև երեխաների համար հասարակության մեջ լիարժեք տեղ գտնելու համար կարևոր դեր է խաղում խոսքը: Խոսքի զարգացումը նպաստում է տրամաբանելուն, գեղագիտական ընկալումը զարգացնելուն, ինչպես նաև հաղորդակցվելուն: Երեխայի համար խոսքը ամենակարևոր գործոնն է: Գոյություն ունեն խոսքի զարգացման բազմաթիվ եղանակներ: Խոսքի զարգացումը խաղերի միջոցով(դերախաղ դիդակտիկ խաղեր):

Երեխայի զարգացման գործում կարևոր դեր ունի խաղը, որը նպաստում է երեխայի զարգացմանը՝ խոսք ,հոգեկան և ֆիզիկական վիճակ: Այն հանդիսանում է անհատի վարքի և խոսքի ձևավորման հզոր միջոց: Երեխան ձևավորվում է որպես անհատ դեռ վաղ մանկության շրջանում: Հատկապես կարևոր է, թե երեխան ինչ դեր է վերցնում իր վրա խաղի ընթացքում: Դերախաղը նպաստում է բառապաշարի համալրմանը և ավելի դյուրին է դարձնում շփումը շրջապատի հետ: Խաղային տեխնոլոգիաների կիրառումը ունի ուսումնադաստիարակչական մեծ նշանակություն: Խաղը դիտարկվում է որպես առաջատար գործունեություն ոչ այն պատճառով, որ այն երեխայի կյանքում մեծ տեղ է գրավում, այլ որովհետև խաղի ընթացքում երեխայի հոգեկան աշխարհում տեղի են ունենում գլխավոր փոփոխությունները, զարգանում են հոգեկան այն գործընթացները, որոնք անհրաժեշտ են զարգացման նոր առավել բարձր աստիճանի անցնելու համար: Խաղալով երեխան անընդհատ ձգտում է գնալ առաջ, նրա մոտ միաժամանակ աշխատում են ենթագիտակցությունը, խելքը և երևակայությունը:

Նպատակն ու խնդիրները

Երեխայի ստեղծագործական երևակայության զարգացում

Բանավոր խոսքի զարգացում

Ինքնարտահայտվելու կարողության զարգացում

Ազատ և անկաշկանդ շփում հասակակիցների և մեծերի հետ

Նախաձեռնելու, համախմբված աշխատելու հմտությունների ձեռքբերում

Աշխատասիրության, պատասխանատվության, ուշադրության դրսևորում

Գեղագիտական ճաշակի զարգացում

Տեսածի, լսածի վերաբերյալ խոսելու կարողություն

Իրավիճակը շտկելու կարողություն

Բարդույթներից ազատագրում

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում

Խաղը կարևոր դեր ունի սովորողների զարգացման, դաստիարակության, աշխարհընկալման գործում: Խաղի բովանդակությունը ճիշտ օգտագործելու դեպքում կարելի է հասնել սովորողի մեջ դրական և կարևոր որակների ու հատկությունների ձևավորմանն և դրանց հետագա զարգացմանը:

Խաղը երեխայի միակ և ամենասիրած զբաղմունքն է և ոչ միայն երեխայի: Երեխան խաղում է միշտ և ցանկացած պահի: Այն թույլ է տալիս բավարարել շատ պահանջներ՝ օրինակ հետազոտության, զվարճանքի, ինքնահաստատման, հավաքված էներգիայի օգտագործմանը և այլն: Խաղի օգնությամբ երեխան ձեռք է բերում այնպիսի որակներ, ինչպիսիք են շփվողականությունը, նախաձեռնությունը, իր գործողությունները հասակակիցների գործողությունների հետ կորդինացնելու ընդունակությունը: Խաղերի միջոցով երեխաները փորձում են արտահայտել իրենց զգացմունքները, բացահայտել իրենց ներքին աշխարհը, լուծել ներքին կոնֆլիկտները, բարձրացնել ինքնագնահատականը:

Խաղը փոխգործուն է. Խաղալու համար երեխան պետք է փոխգործի որևէ իրի կամ մարդու հետ: Նա պետք է զբաղված լինի ազդելով մարդու կամ իրի վրա, հակազդելով փոփոխություններին , որին այն ենթարկվում է: Գործողությունը փոխադարձ է, քանի որ անգամ իրերն են փոխգործում, երբ դրանցով խաղում են:

Խաղն ազատ է, հանպատրաստից և ոչ հարկադիր: Խաղալու համար երեխան պետք է ցանկանա անել այն, ինչ նա անում է: Նա կարող է գործողությունն ինքը ընտրած լինի, կամ ուսուցիչը առաջարկած լինի, բայց երեխան պետք է ազատ անի դա: Եթե խաղի ընթացքում երեխան իր ընտրությունը ինքնուրույն չի կայացնում, այլ կատարում է ցուցումները՝ ուրեմն նա չի խաղում:

Խաղը երեխայի համար հետաքրքիր և հրաշալի է: Խաղի ժամանկ երեխան կլանվում է այն բանով ինչ նա անում է:

Խաղն անվերջ է և երևակայական, արտահայտիչ, ստեղծագործ և տարամետ: Երեխաների խաղի մեջ ճիշտ կամ սխալ պատասխաններ չկան: Խաղի ժամանակ երեխաները կլանված են մի պրոցեսում, որտեղ նրանք ինչ էլ որ անում են , եթե դա վտանգավոր չէ իր կամ ուրիշների համար, ընդունելի է և նպաստում է գործունեության կարևորմանը:

Հիմնավոր ուսուցման համար երեխայի իրականացվելիք խաղը պետք է ներառի բոլոր այս 4 հետևյալ հատկանիշները՝

Այն պետք է լինի փոխգործուն, համպատրաստից և ազատ, երեխայի համար շատ հետաքրքիր և անվերջ:

Խաղը երեխայի համար կարևոր է և լուրջ: Երբ երեխան իր կամքով, ազատ և անկաշկանդ շփվում է այլ մարդկանց կամ իրերի հետ , բավարարում է իր հետաքրքրությունները, պահանջմունքները, կարողանում է իր իսկ խաղից ելնելով հետևություններ, վերլուծություններ կատարել:

Խաղը երեխային հնարավորություն է տալիս զննել, ստուգել, զարգացնել մտքեր և գաղափարներ, իր սխալներից ելնելով սովորել և կատարելագործվել: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են խաղի՝ որպես երեխայի սովորելու ու զարգանալու միջոցի մի քանի առանձնահատկություն.

Խաղը փոխգործուն և ինտերակտիվ է:
Խաղալու համար երեխան պետք է փոխներգործի որևէ իրի կամ մարդու հետ:
Գործողությունը փոխադարձ է, քանի որ անգամ իրերն են փոխգործում, երբ դրանցով խաղում են: Երբ երեխան որևէ բան է անում իրի, օրինակ՝ խաղալիքի, կամ մարդու հետ, այն հակազդում է, և երեխան համապատասխանաբար հարմարեցնում է իր

հաջորդ գործողությունը, նա խաղում է։ Իսկ երբ երեխան պասիվ դիտում է (օրինակ՝ հեռուստացույց) կամ լսում (օրինակ՝ լսում է ուսուցչին, որը ինչ-որ բան է բացատրում) նա չի խաղում։

Խաղն ազատ է, համպատրաստից և ոչ հարկադիր։
Խաղալու համար երեխան պետք է ցանկանա անել այն, ինչ անում է։ Նա կարող է գործողությունն ինքն ընտրել ընտրած լինել, կամ ընդունի ուսուցչի առաջարկը, բայց դա պետք է ազատ ընտրություն լինի։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Դիդակտիկական խաղեր

Հարուստ սնունդ տալով երևակայությանը խաղը ձևափոխում է արտաքին աշխարհը ըստ երեխայի ցանկության և միաժամանակ թույլ է տալիս խորացնել և ամրապնդել անձի արժեքավոր հատկությունները՝ համարձակություն, վճռականություն, կազմակերպվածություն, հնարամտություն և այլն: Երևակայական իրավիճակում իր և ուրիշի վարքը համադրելով պատկերացվող իրական անձի վարքագծին երեխան սովորում է կատարել անհրաժեշտ գնահատումներ և համեմատություններ: Խաղային գործունեությունը նպաստում է կամածին ուշադրության և կամածին հիշողության զարգացմանը: Խաղի պայմաններում սովորողներն ավելի են կենտրոնանում և ավելի շատ գիտելիքներ մտապահում, քան գործունեության որևէ այլ տեսակի ժամանակ: Այսինքն սաղմնավորվում են հիմքերը ուսումնական գործունեության, որը և առաջատար է դառնում դպրոցական տարիներին: Փորձը ցույց է տվել, որ լեզվական հմտությունների ձևավորումն զգալիորեն արագ է կատարվում խաղային իրավիճակներում: Որպես կանոն, հենց այդ ընթացքում առաջին անգամ երեխայի խոսքում հայտնվում են նոր, դժվար հիշվող բառեր, և նա խաղալիս դրանք օգտագործելով կիրառում է նաև ամենօրյա խոսքում: Այդպիսով, երեխաները խաղային իրադրություններում սովորում են նոր բառեր, կրկնում մեծերի կողմից արտասանված բառերն ու նախադասությունները՝ հարստացնելով իրենց լեզուն, խոսքը:

Խոսքի զարգացման դասերին երեխաները ամենից շատ դժվարանում են իմաստի ընկալման և մտապահման փուլում: Այնուամենայնիվ, այդ դասընթացի վերացականությունից և ընդհանրականությունից բխում են մի շարք դժվարություններ: Ինչպես նշում է ռուս նշանավոր մեթոդիստ Մ.Լ.Զակոժուրնիկովան, «Քերականության ուսումնասիրության ժամանակ երեխաները գործ ունեն ոչ թե զննական առարկաների հետ, այլ լեզվական անտեսանելի երևույթների, որոնք արագ մոռացվում են», ուստի դրանք

հաղթահարելու համար մեզ օգնում են լեզվական խաղերն ու վարժությունները: Մանկավարժության մեջ «ուսուցում» եզրով սահմանվում է մի գործընթաց, երբ գիտելիքն ու հմտությունները կիրառելի են դառնում, որի արդյունքում փոխվում է երեխայի վարքագիծը, նաև այնպիսի գործընթաց, երբ սովորողը, գիտելիքներից և տեղեկություններից բացի, կարիք ունի մտածողության մշակման և համագործակցային հմտությունների ձևավորման ու զարգացման: Այդ առումով անգնահատելի է խաղի՝ որպես ուսուցման և դաստիարակության մեթոդի կիրառումը դասագործընթացում: «Արդի ժամանակաշրջանում կարևորագույն խնդիրներից է դառնում սովորողների ճանաչողական հետաքրքրությունների, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը»:

Արդյունավետ ուսուցումը նպաստում է երեխայի ինքնակազմակերպմանը և ինքնուրույնությանը: Դասարաններում ուսուցումը կազմակերպելիս պետք է հաճախ ստեղծել խաղային իրավիճակներ և աշակերտներին հնարավորություն ընձեռել՝ մտնելու իրենց համար հիմնական և կարևոր համարվող գործունեության ոլորտ: Չէ՞ որ խաղն առավել գրավիչ է դարձնում ուսուցումը, կենտրոնացնում սովորողի ուշադրությունը, խթանում մտածողությունը: Խաղի միջոցով ճշգրտվում և ընդլայնվում են պատկերացումները շրջապատի, բնության, հայրենիքի, ծնողների և ընդհանրապես աշխարհի մասին, դաստիարակվում են ուշիմություն, աշխուժություն, զսպվածություն և այլ դրական հատկանիշներ: Հովհ. Թումանյանը նույնպես մեծ կարևորություն է տալիս խաղին. «Խաղը մարդու օրինական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու»: Ուսուցիչը պետք է իմանա, որ խաղի բովանդակությունը և կանոնները պետք է հասկանալի լինեն սովորողներին, խաղի բովանդակությունը պետք է համապատասխանի աշակերտների գիտելիքների մակարդակին, խաղերը պետք է լինեն կոնկրետ և նպատակային, իսկ դրանց քանակն ու տևողությունը՝ չափավոր: Խաղը պետք է նպաստի գիտելիքների հարստացմանը և հետաքրքրությունների ձևավորմանը: Խաղը երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման,

ինքնակատարելագործման կարևոր միջոց է, որը բացահայտում է նրա բնավորության շատ կողմեր: Խաղի միջոցով երեխային կարելի է և՛ կրթել, և՛ դաստիարակել: Խաղի ընթացքում երեխան դրսևորում է որոշակի ինքնուրույնություն, ձգտում է ինքնահաստատման, ձևավորվում են բնավորության որոշակի գծեր: Խաղի ընթացքում երեխաները ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Խաղն ապահովում է հասակակիցների հետ փոխշփումներ, հաճելի մթնոլորտ և համագործակցելու լավագույն պայմաններ: Դասի տարբեր փուլերում անցկացվող խաղերի տեսակներից կարելի է առանձնացնել այն ուսուցողական խաղերը, որոնք համապատասխանում են դասի թեմային և կազմակերպվում են առանձին թեմաների ուսուցումը նախապատրաստելու, անցածը խորացնելու, ամրապնդելու և ամփոփելու նպատակով:
Դպրոցականների մասնակցությունը դիդակտիկ խաղերին նպաստում է նրանց ինքնադրսևորմանը և ինքնահաստատմանը: Դրանք ձևավորում են հաջողության, հաղթանակի հասնելու կայուն ձգտում, հետևաբար նաև կամային որակներ:
Լեզվական խաղերը լրացնում են լեզվական վարժությունների համակարգը: Որպես խաղային միջոց՝ դրանք ունեն սրամիտ ու զվարճալի բնույթ և հնարավորություն են ընձեռում գրավելու երեխաների ուշադրությունը, երկար ժամանակ նրանց օգտակար ու արդյունավետ աշխատանքով զբաղեցնելու: Լեզվական խաղերը նպաստում են լեզվական գիտելիքների ձեռքբերման դժվարությունների հաղթահարմանը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Դերախաղ

Անհատի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է համարվում դերային խաղը: Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության դաստիարակման գործում: Դիմացկունություն ցավի նկատմամբ, արժանապատվության, պատասխանատվության, վստահության և արդարության զգացում: Իր կյանքի ոչ մի փուլում երեխան չի սովորի այդքան շատ և արդյունավետ, քան իր մանկական խաղերի ընթացքում: Այդ իսկ պատճառով խաղային գործունեությունը հարկավոր է տեղափոխել դպրոցական ուսուցման շրջան, այդ դեպքում երեխայի ներքին հնարավորությունները ավելի ազատ են զարգանում: Հեքիաթների, առածների և ասացվածքների ուսումնասիրումը նպաստում է երեխաների արժեհամակարգի ձևավորմանը: Այս մոտեցմամբ երեխաներին սովորեցնում են հարգել մեծերին, օգնել ծերերին, լինել աշխատասեր, ընկերասեր, պատվախնդիր, սուտ չխոսել, հարգել դիմացինի կարծիքը և այլն: Փորձը ցույց է տալիս, որ մյուս գրական ժանրերի համեմատությամբ հեքիաթները, առածները և ասացվածքներն առավել քան արժեքավոր են սովորողների մտածողական ու երևակայական կարողությունների, ինչպես նաև բարոյական ու հոգևոր արժեքների ձևավորման առումով: Խաղ-բեմականացումը առավել արդյունավետ է լինում, եթե մինչև բեմականացումն աշակերտները լիարժեք ընկալում են իրենց տրվող դերերի բովանդակությունը: «Դասավանդման և դաստիարակության ժամանակ է, որ առաջանում են բազմաթիվ խնդիրներ, և ուսուցիչն է, որ ուսուցման մեթոդաբանության, մանկավարժական վարպետության և ճկունության շնորհիվ կամաց-կամաց փոխում է երեխայի հետ աշխատելու բնույթը՝ ավելի շատ ուշադրություն դարձնելով նրա և՛ անձնային, և՛ իմացական հնարավորությունների զարգացմանը»: Մինչդեռ նպատակային ուսուցում կազմակերպելու համար ուսուցիչը պետք է հետամուտ լինի սովորողների հետաքրքրությունների բացահայտմանը, համագործակցային կարողությունների զարգացմանը, հաղորդակցական

ունակությունների, անհատականության, տրամաբանական մտածողության, վերլուծական կարողությունների ձևավորմանը: «Ուսուցչի խնդիրն է իր ունեցած մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող գործընթացի նպատակներից: Խաղը երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման, ինքնակատարելագործման կարևոր միջոց է, որը բացահայտում է երեխայի բնավորության բոլոր կողմերը»:
Խաղն օգնում է ուսուցման գործընթացում բազմաթիվ նպատակների իրականացմանը: Լուծվում են ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական բնույթի, կարգապահության, հաղորդակցման, միմյանց լսելու կարողության և համագործակցության զարգացման հետ կապված բազմաթիվ խնդիրներ: Ամփոփելով վերն ասվածը՝ կարելի է ասել, որ ուսուցողական խաղերի միջոցով հնարավոր է ձևավորել և զարգացնել աշակերտների ստեղծագործական կարողությունները, լեզվական հմտությունները և այլն:
Խաղերն օգնում են ուսուցչին առավել մատչելի տարբերակով ներկայացնելու դասի թեմատիկան՝ ձևավորելով երեխայի երևակայելու, զգացմունքներն ու գործողությունները ինքնուրույն կարգավորելու ունակությունները:
Այսպիսով՝ թեմատիկ խաղերի կարևոր նշանակությունն է խորացնել դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունները, դասը դարձնել առավել հետաքրքիր, անսովոր և ցանկալի, զարգացնել երեխայի ուսումնառության դրդապատճառները, բարձրացնել աշխատունակությունը:Սյուժետա-դերային խաղերում երեխաները վերարտադրում են անմիջապես մարդկանց, մարդկային դերերն ու հարաբերությունները:

Անհատի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է համարվում դերային խաղը: Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության դաստիարակման գործում: Դիմացկունություն ցավի նկատմամբ, արժանապատվության, պատասխանատվության, վստահության և արդարության զգացում: Խաղային գործունեությունը հարկավոր է տեղափոխել

դպրոցական ուսուցման շրջան, այդ դեպքում երեխայի ներքին հնարավորությունները ավելի ազատ են զարգանում: Երեխային շատ են անհրաժեշտ դերային խաղերը, դրանք նրան օգնում են նախապատրաստվել կյանքին ու հասարակությանը: Գործողությունների կրկնումը մեծերի ետևից և սյուժետների խաղարկումը կարող են թվալ չհղկված: Երեխան կարող է պահել իրեն գոռոզ, միամիտ, ակտիվ կամ պասիվ: Երբ երեխան գիտակցում է, որ գործում է ինքնուրույն, սկսվում է նրա կյանքի առաջին դերային խաղը: Երեխան փորձում է կրկնել մեծի գործողությունները, բոլոր առարկաները և իրադարձությունները , որոնք վառ էմոցիոնալ արձագանք և տեղ են գտել երեխայի հոգում՝ վերածվելով նրա նոր կերպարներին:

Դերային խաղերը հասարակության հետ պրոեկտման վերաբերմունք են: Հասակակիցների դերային խաղերը օգնում են կառուցել հարաբերություններ ընկերների հետ, պաշտպանել սեփական հետաքրքրությունները և հաշվի առնել այլ մարդկանց ցանկությունները: Խաղի մեջ փոքրիկը ձեռք է բերում հմտություններ, որոնք պետք կգան ուսումնական գործընթացում: Ինչքան երեխայի հայացքներն են փոխվում, այնքան ել փոխվում է խաղի սյուժեն: Երեխաների համար դերային խաղերն ունեն ավանդական սյուժետխանութ, հիվանդանոց, դպրոց: Նման խաղեր խաղում են բոլոր սերունդները ավելացնելով նրանց տարբեր բովանդակություններ: Խաղի բովանդակության վերաբերմունքը փոխանցվում է մասնակիցներին: Մի <<մայրը>> կզայրանա ընտանիքի վրա բարձր ձայնով, մյուսը երգեր կերգի և գրքեր կկարդա: Մարդկանց հարաբերությունները իրար նկատմամբ շատ են հուզում երեխաներին: Դերային խաղի մեջ փորձելով կրկնել այն ամենը ինչ նրանք տեսել և լսել են՝ երեխաները իրենց վրա են վերցնում այս կամ այն ոճը: Ոչ բոլոր երեխաները հակվածություն ունեն դեպի դերային խաղ: Ամաչկոտ, քաշվող փոքրիկները հաճախ նախընտրում են սպորտային խաղեր, կամ մենակություն համակարգչի դիմաց: Չի կարելի թերագնահատել դերային խաղերի ներդրումը երեխայի զարգացման գործում: Եթե երեխան ամաչկոտ է, կարելի է երեխային գրավել դեպի խաղը՝ այն վերածելով թաթերական ներկայացման: Կախարդական հեքիաթները, որոնք սիրում են երեխաները, կօգնեն պատրաստել վարքի ճիշտ հմտությունների, յուրաքանչյուր տնային աշխատանք կարելի է ուղեկցել խաղով: Երեխային խաղի մեջ ներգրավելուն

միտված այդ բոլոր միջոցներն ունեն մեկ նպատակ դաստիարակել ներդաշնակ զարգացած, հաջողված անձնավորություն: Դերախաղ կարող են կազմակերպել չափահաս երեխաները փոքրերի հետ, սա ունի դրական ուղղվածություն, երբ,կազմակերպելով դերախաղ, չափահաս երեխաները կարող են փոխանցել իրենց "առաջնորդի" վարքը փոքրին: Երեխաները պետք է խաղան իրենց հասակակիցների հետ, այլապես կմեծանան բարդույթավորված, սեփական կարծիքից զուրկ, ագրեսիվ: Դերախաղը ծանոթանալու, շփվելու, ընկերանալու միջոց է:

Դերախաղի նշանակությունը երեխայի զարգացման գործում. Երեխան որպես հերոս

Սա ձեռք բերած գիտելիքների կամ փորձի հարստացման միջոց է: Կատարելով որևէ դերախաղ ձգտում է ըստ համապատասխան իրավիճակի դրսևորել այն և հասցնել ավարտին: Դերախաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս բացահայտել իրենց ընդունակությունները: Անհրաժեշտ է ընտրել խաղի համար բազմաբովանդակ և հետաքրքրաշարժ թեմատիկա: Այդ կերպ հնարավոր է լինում իրականացնել տարբեր դերեր: Այստեղ կարևորվում են համապատասխան մթնոլորտի ստեղծում և մասնակիցների անկաշկանդ վարքագծի ապահովումը: Դերախաղերը կարող են ունենալ հստակ կառուցվածք կամ լինել ազատ: Այն օգտակար է, երբ փորձում են ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ տարբեր կառուցվածք ունեն: Դերախաղի գրագետ իրականացումն անգնահատելի օգուտ է բերում մասնակիցներին: Դրանք ցանկալի է անցկացնել պարապմունքի մեջտեղում: Մեթոդը պետք է կիրառել շատ զգույշ: Ցանկալի է, որ խմբերը լինեն փոքր: Եթե մի խումբը խաղում է մյուս խումբը լինում է դիտորդ: Դերախաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչպես են իրենց զգում այլ մարդիկ, երբ առնչվում են ինչ-ինչ իրավիճակների հետ: Դերային խաղը երեխայի համար սիրելի, զվարճալի, հետաքրքիր խաղ է, որը զարգացնում է նրա խոսքը, ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, խմբով խաղալու-աշխատելու հմտությունները: Դերախաղի էական նշանակությունը այն է, որ երեխան հայտնվում է ուրիշ մարդու դիրքում և կարծես աշխարհին նայում է այն մեծահասակի տեսանկյունից, որի դերը կատարում է: Երեխայի երևակայությունը զարգանում է հատկապես ստեղծագործական, դերային խաղերի միջոցով: Երեխան հավատում է իր հորինած կերպարին: Նա ոչ միայն

հավատում է, այլև ինքն է կատարում այդ դերերը: Մտնելով կերպարի մեջ՝ երեխան դառնում է նա, ում ընդօրինակում է: Դերային խաղերը ժամանցային բնույթի խաղեր են, դրամատիկ գործողության տեսակ, որի մասնակիցները գործում են ընտրված դերերի շրջանակներում, ղեկավարվում են ընտրված դերի միջավայրի տրամաբանությամբ և գործում են արդեն եղած սյուժեով, կամ հենց իրենք են ստեղծում սյուժեն: Դերային խաղի գործողությունները ծավալվում են այդ խաղի աշխարհում: Այդ աշխարհը կարող է լինել ամբողջովին հորինված, կամ հիմնված լինել ինչ-որ գրքի կամ ֆիլմի, կամ մի իրադարձության սյուժեի վրա: Այսպիսի խաղերում շատ հաճախ բացակայում է վերջնական նպատակը և խաղի իմաստը կայանում է այդ խաղային աշխարհի ուսումնասիրումը: Դերային խաղն ունի ուսուցանող, դաստիարակող և պրակտիկ մեծ հնարավորություններ: Այն խոսքային, խաղային և ուսուցման միաժամանակյա գործընթաց է:

Հոգեբանների կարծիքով դասապրոցեսում խաղի մրջոցով ստեղծված խթանումը (խաղային խթանումը) պետք է կիրառվի ճանաչողական, էսթետիկական, հաղորդակցական խթանումների հետ միասին: Խաղի ընթացքում երեխան գտնվում է խոսքային պատրաստականության մեջ, ուշադիր լսում է ուսուցչին և ընկերներին: Անընդհատ կրկնվող բառերը չեն հոգնեցնում ու ձանձրացնում նրան:

Եզրակացություն

Ելնելով աշխատանքում նշված կետերից կարելի է եզրակացնել, որ խոսքի զարգացումն սովորողի համար անխուսափելի և շատ կարևոր է, որպեսզի այն ընթանա լիարժեք և աղեկվատ: Ցանկացած հասարակություն և ազգ ինքն է թելադրում իր համար ընդունելի նորմերը, կանոնները, արժեքներն ու լեզուն, ուստի մենք յուրացնում ենք մեր ազգային լեզուն և հետագայում էլ ստեղծում ենք հաղորդակցական հմտություններ հենց այդ լեզվով: Երեխաները խոսքը ձևավորում են ու ստեղծում տարբեր միջոցներով, սակայն դրանցից ամենամատչելին խաղն է: Այս փուլը շատ առաջնային է յուրաքանչյուրի համար: Խաղի միջոցով ձևավորված խոսքն ավելի մատչելի է, այն չի պարտադրում և միևնույն ժամանակ ուսուցանում է: Գաղտնիք չէ, որ այն երեխաներն ովքեր ավելի շատ են խաղում ստեղծագործական խաղեր, նրանց խոսքն ավելի շուտ է ձևավորվում: Ամեն երեկո հեքիաթ լսող երեխաներն ունենում են զարգացած խոսք, պայծառ երևակայություն, լավ հիշողություն և հարուստ բառապաշար: Ուստի ելնելով այս ամենից երեխայի հետ անհրաժեշտ է ունենալ անընդհատ շփում և օգնել նրան ձեռք բերելու նոր հմտություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դպիր Մխիթար Սեբաստացի կրթահամալիր ՆԱԽԱՇԱՎԻՂ

2. Լալա Սմբատյան Խաղերի և խաղ զվարճանքի կազմակերպումը մանկապարտեզում:

3. poqrik.am

4. https://forum.armedu.am/forum/կրթական-ոլորտ/հանրակրթական-դպրոց/ներառական-կրթություն/2405-զարգացնող-խաղեր

5. https://www.vsu.am/grqer/2017/aprak/arxutyanarmine.pdf

6. https://ussur-ds106.ru/hy/igry-dlya-razvitiya-rechi-doshkolnikov-s-celyu-didakticheskie-igry-po-razvitiyu/

7. http://qristinaasatryan.blogspot.com/p/blog-page_65.html

Բովանդակություն

Հանգուցային բառեր 2
Ներածություն 2
Նպատակն ու խնդիրները 3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ 4
Խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում 4
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ 7
Դիդակտիկական խաղեր 7
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ 10
Դերախաղ 10
Եզրակացություն 15
Օգտագործված գրականության ցանկ 16